



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 31 Հոկտեմբեր, 2022

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 8

ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌԲԸ ԵՒ ՄԱՐԳՈՒՆ ՏՐՈՒԱԾ ՊԱՏԻՒ

Ով Տէր, մեր Տէրը,

ինչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

Փառքդ աւելի բարձր է՝ քան երկինքը.

բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով

գովեստդ հիստեցիր քեզի հակառակողներուն դիմաց,

որպէսզի լռութեան մաքնես

թշնամիներդ եւ հակառակողներդ:

Երբ կը դիպեմ երկինքդ, մաքներուդ գործը,

կը դիպեմ լուսինն եւ աստղերը, որ դուն հաստատեցիր,

կը մրաձեմ. Ի՞նչ է մարդը, որ կը յիշեա զայն,

մարդ արարածը ի՞նչ է, որ յոգածութիւն ցոյց կու տաս անոր:

Զայն քիչ մը վար դասեցիր քեզմէ,

փառքով ու պատուով պսակեցիր զայն.

քու բոլոր սրեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն,

անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ.

հօտերն ու արջարները. նաեւ բոլոր վայրի անասունները,

երկինքի թռչուններն ու ծովուն ձուկերը,

եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները:

Ով Տէր, մեր Տէրը,

ինչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աչ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուր եւ ի գիշերի,

ի նստիլ ի Կան, ի գնալ ի ճանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ



ՄԱՂՄՈՍ 8



Ցրոյ Մաղմոսը մաս կը կազմէ օրհներգութեան բաժնին, անդրադառնալով Աստուծոյ մեծութեան, սրբեղծագործութեան, Աստուծոյ սիրոյն ու հաւաքարմութեան հանդէպ մարդ արարածին ընդհանրապէս, եւ ի մասնաւորի Իր ժողովուրդին:

Առաջին իսկ բառերը կու գան ցոյց տալու Աստուծոյ հանգամանքը, որ Ան ոչ միայն Արարիչ է, Սրբեղծիչ է, այլ՝ Տէր է, եւ առաւել եւս, մեր Տէրն է, հաւաքական, մեր բոլորին: Իսկ եթէ Ան Տէրն է, ուրեմն մենք ալ Անոր կը պատկանինք: Իսկ նոյն այս Տիրոջ անունը նաեւ փառաւեղ է ոչ միայն Իսրայէլին, այլ՝ ամբողջ աշխարհին, ոչ միայն աշխարհին, այլ նաեւ բարձր է՝ քան երկինքը: Աստուծոյ փառաւեղութիւնը ոչ միայն երկրին ու երկինքին, այլ՝ նաեւ այդ նոյն փառքը կը յայտնուի մանուկներուն եւ ծծկեր երեխաներու բերնով: Աստուծոյ յարուկ գործելակերպն է, որ Ան ինքզինք յայտնէ, կամ Իր ծրագիրը ցոյց տայ այնպիսի մարդոց ճամբով, որոնք այս աշխարհի չափանիշներով փկարներն են, անօգնականներն են, խեղճերն են, փկարներն են, յիմարներն են, բայց Աստուծոյ գործութիւնն ու իմաստութիւնն է պիտի ըսէ Պօղոս Առաքեալ: Այս նոյն հարուածը կը տեսնենք Մարթէոսի Աւետարանին մէջ, երբ Քրիստոս յաղթական մուտք կը գործէ Երուսաղէմ, եւ այնպէս Աւագ քահանաներն ու Օրէնքի ուսուցիչները կը սաստնան, այն ամբոխին, որոնք կ'աղաղակէին ըսելով. «Ովսաննա», եւ կ'ուզեն լռեցնել, Քրիստոս կը յիշեցնէ այս հարուածը, ըսելով. «Չէք կարդացած, որ մանուկներու եւ կաթընկեր փղայոց բերնով գովեստի հիւսեցիր»: Այս բոլորը, որպէսզի անով լռութեան մարտն թշնամիներն ու հակառակորդները, այսինքն՝ Չարն ու իր գործակիցները: Երբ Աստուծոյ ամենագործ ու ամենակարող ըլլալով հանդերձ կը գովուի ու կը փառաբանուի փկար թուացող մարդոց ճամբով, ապա այն արեւն Անոր թշնամիները լռութեան կը մարմնանան, թէ ինչպէս կարելի է այս բոլորը: Նոյնն է նաեւ մեր պարագան, երբ մարդ արարածը իր փկար բնութեամբ կը յաղթէ չարին հրամցուցած փորձութիւններուն, աստուածային օգնութեամբ: Այդ իսկ է նպատակը, այլապէս Աստուծոյ կրնայ վերջ տալ այս բոլորին մէկ իսկ հարուածով, մէկ շունչով, բայց կ'ուզէ որ մարդը ինք, իր փկար բնութեամբ մասնակից դառնայ այդ յաղթանակին:

Դաւիթ այս անգամ կ'անդրադառնայ Աստուծոյ սրբեղծագործութեան, երբ պարզապէս աչքերը դէպի երկինք կը նային, այնպէս կը տեսնէ Աստուծոյ մարմնները, այսինքն՝ զինք կը ճանչնան որպէս սրբեղծիչը այդ բոլորին: Իսկ այս վեհութեան դիմաց ամենափոքր էակը՝ մարդ արարածը, որուն համար ալ հարց կու տայ ըսելով. «Կը մտածեմ, թէ ի՞նչ է մարդը, որուն այսքան հոգածութիւն ցոյց կու տաս»: Ինչո՞ւ այսքան հոգածութիւն մէկուն մը համար որ մեղքերով լեցուն է, մէկու մը համար որուն կեանքին օրերը հաշուուած են: Աստուծոյ ոչ միայն կը մտածէ կամ կը յիշէ մարդուն մասին, այլ նաեւ այցելութիւն ալ կ'ուզէ տալ, եւ այս երեւոյթը ցոյց կու տայ մտերմութեան, փոխ յարաբերութեան պատկերը:

Ապա կ'անդրադառնայ, թէ ինչպէս Աստուծոյ մարդը քիչ մը վար դասեց Իրմէ, ուրիշ թարգմանութեան մէջ կ'ըսէ. «հրեշտակներէն»: Այսպէս բացատրութիւնը այն է, որ Դաւիթ այս արտայայտութեան մէջ կը տեսնէ, որ մարդ արարածը երկու արարածներուն միջեւ եղող արարածն է, բայց դէպի վեր նայելու հեռանկարով կ'ուզէ դիտել, եւ ոչ դէպի վար: Մենք այսօր ինչպէս կը դիտենք մարդը, եւ ինչպէս կը դիտենք մենք զմեզ: Մարդուն վերաբերմունքը այսօր ցոյց կու տայ, որ մարդը իր արարքներով շար աւելի մօտիկ է վայրի անասունին քան հրեշտակին, հակառակ որ Դաւիթ կ'ըսէ հրեշտակներէն քիչ մը վար դասեցիր, իսկ ուրիշ թարգմանութիւն մը, Քեզմէ քիչ մը վար դասեցիր, ան ալ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ սրբեղծուած ըլլալու հանգամանքն է որ ցոյց կու տայ: Փառքով ու պատուով պատկերիր: Արդէն իսկ կատարուածի հանգամանքով ցոյց կու տայ, բան մը որ ի լրումն ժամանակի պիտի կատարուէր Քրիստոսով, երբ Քրիստոս Ինք քիչ մը վար դասուելով հրեշտակներէն, ծառայի կերպարանք առնելով, բայց յետոյ դարձեալ նոյն փառքը վերստին ցոյց տալու: Իսկ միւս կողմէ նոյն փառքին ու պատուին արժանացնելու մարդ արարածը, այն մարդը որ պիտի փրկուի Յիսուս Քրիստոսով: Այսինքն՝ ինչ բան է որ կը սպասէ մեզ եթէ ոչ այն փառքը որ պիտի տրուի աւարտին, ժամանակներու լրումին: Վերակացու կարգեցիր: Այն Աստուծոյ երբ մարդը սրբեղծեց զայն վերակացու կարգեց իր ամբողջ սրբեղծագործութեան վրայ, որպէս փրկեալ, բայց մարդը չկարողացաւ զայն փրկեսել, որուն համար ալ հաշիւ ունի տալիք: Ուստի, ակնարկութիւնը կերթայ նաեւ Յիսուս Քրիստոսի, որ ըստ Պօղոս Առաքեալին, միայն Յիսուս Քրիստոսով է որ այս խոստումը իր կատարումը կը գտնէ, որ եղաւ ճշմարիտ մարդ, կատարեալ մարդ, դառնալու օրինակը մարդ արարածին ապրելու նոյն ձեւով: Դաւիթ անգամ մը եւս Աստուծոյ անունին փառաբանանքը կ'ընէ անոր մէջ տեսնելով Աստուծոյ վեհութիւնը եւ բարութիւնը, թէ որքան Աստուծոյ բարի է, որ մարդուն փրկած է այնպիսի փրկող, դիրք, փառք ու պատիւ, որ որեւէ այլ ուրիշ արարածի չէ փրկած: Ի վերջոյ, այս Մաղմոսը Քրիստոսի, եւ Քրիստոսի ընդմէջէն մարդ արարածին մասին է: